С. А. Маркарян, Варяги-Викинги на Кавказе (XI в.) [*Վարեագ-Վիկինգները Կովկասում (ԺԱ. դար)*] Երեւան, ՎՄՎ Պրինտ, 2014, 528 էջ:

Արեւելագէտ, պատմական գիտութիւնների թեկնածու Սամուէլ Մարգարեանը երեսուն տարի շարունակ զբաղուել է պատմական մի իրողութեան վերհանմամբ եւ մեկնաբանութեամբ: Նա ջանացել է ապացուցել, որ սկանդինաւեան միջնադարեան *Սագա Ինգվարի Մասին* ասքում յիշուող դէպի արեւելք կատարած վիկինգների մի ուղեւորութիւնը եւ վրացական *Քարթլիս Ցխովրեբա* (Քարթլիի կեանքը) ժամանակագրութեան (ԺԱ. դար) յիշատակութիւնը Կովկաս ժամանած վարեագների (նոյնինքն՝ վիկինգներ, սկանդինաւցիների նախնիները) մասին նոյնական են, ինչպէս նաեւ հայկական սկզբնաղբիւրի՝ Ստեփանոս Օրբէլեանի *Պատմութիւն Նահանգին Սիսական* երկի միջոցով փորձել պարզել այդ վիկինգների յետագայ ճակատագիրը:

Այս խնդրին նուիրուած Մարգարեանի՝ 1983-2013ին հրատարակած աշխատութիւններն ամփոփուել են *Վարեագները-Վիկինգները Կովկասում (ԺԱ. դար)* ռուսերէն մենագրութեան մէջ: Գիրքը բաղկացած է երկու գլխից: Առաջին գլխում հեղինակը ներկայացրել եւ քննել է վերոյիշեալ նիւթը տարբեր դիտանկիւններից: Երկրորդ գլխում ներկայացուած են *Սագա Ինգվարի Մասին* ասքը՝ շուէդերէն տարբերակը, անգլերէն եւ ռուսերէն թարգմանութիւնները՝ ծանօթագրութիւններով հանդերձ: Գրքի «Յաւելուած»ում ընդգրկուել են աշխատութեան սկզբնաղբիւրները, մասնաւորապէս վրացական սկզբնաղբիւրի բնագիրը եւ թարգմանութիւնները, հայկական սկզբնաղբիւրի բնագիրը, Շուէդիայի տարածքում առկայ մի շարք ռունական արձանագրութիւնների լուսանկարներ եւն.: Արդիւնքում ստացուել է 528 էջից բաղկացած մի պատկառելի հատոր: Ճիշտ է, գրքի ծաւալին նպաստել են նաեւ քննուող խնդիրների եւ յիշատակուող փաստերի բազմակի կրկնութիւնները (քանի որ, իվերջոյ, գործ ունենք պատմական ժլատ տեղեկութիւնների վրայ հիմնուած աշխատութեան հետ), որոնք, սակայն, ամրապնդում են հեղինակի առաջ քաշած տարբերակի տրամաբանական եւ պատմականօրէն համոզիչ լինելը:

Սկանդինաւցի Հաւդինգ (առաջնորդ) Ինգվարի հրամանատարութեան ներքոյ վիկինգների՝ Կովկասում յայտնուելու վերաբերեալ յիշատակութեան քննութեամբ զբաղուել են ինչպէս վրացի (Զուրաբ Պապասկիրի), այնպէս էլ եւրոպական ուսումնասիրողներ, սակայն նրանց մտքով չի անցել առաջ քաշել մի վարկած, որ սկանդինաւեան եւ վրացական աղբիւրներում առկայ արշաւները կարող էին նոյնական լինել[1]: Դա կատարել է Մարգարեանը՝ նաեւ մէկ քայլ առաջ գնալով,

պատասխանելով այն հարցին, թե ինչ յետագայ ճակատագիր կարող են ունեցած լինել Կովկասում յայտնուած այդ հիւսիսցիները: Այստեղ արդէն օգնութեան է եկել հայկական սկզբնաղբիւրների իմացութիւնը[2], եւ Մարգարեանը նրանց նոյնացնում է Օրբէլեանի յիշատակած վրացի իշխան Լիպարիտ Օրբէլեանի՝ սելջուկների դէմ 1049ին մղած Բասէնի Արջովիտ Գաւառի Կապուտրու ամրոցի ճակատամարտին մասնակցած եօթ հարիւր մարտիկների հետ («*եօթ հարիւր մեծամեծ ազատներ, որոնք իր իսկ ստորադրեալներն էին*», էջ 509): Մարգարեանը նշում է, որ այդ 700 ռազմիկները տեղական, կովկասեան ծագում չեն ունեցել, քանի որ եթէ նրանք լինէին յոյներ, վրացիներ կամ հայեր, այնժամ անհասկանալի է, թէ ինչու, խօսելով իշխան Լիպարիտի զօրքի միւս ջոկատների մասին, Օրբէլեանը բնութագրում է նրանց ըստ ազգութեան (էջ 127):

«*Ես առաջարկում եմ Ինգվարի վիկինգների եւ Վրաստան, Աղուանք կամ Շիրվան եւ հիւսիս-արեւմտեան Հայաստան եւ Կասպից ծովի ափ նրանց կատարած արշաւի հետ կապուած իրադարձութիւնների սեփական տարբերակը՝ ելնելով աղբիւրների համեմատական վերլուծութիւնից եւ ԺԱ. դարի 40-ական թթ. Վրաստանի, Հայաստանի, Բիւզանդիայի եւ հին Ռուսիայի պատմութեան իրական պատմական փաստերի եւ դրուագների համադրութիւնից, ինչպէս նաեւ ելնելով այն ռազմաքաղաքական մթնոլորտից, որ առկայ էր Հարաւային Կովկասում XI դարի կէսին*»՝ գրում է հեղինակը (էջ 187):

Առաջին իսկ գլխով հեղինակը համարձակ ենթադրութիւն է կատարել՝ փորձելով պարզել ԺԱ. դարում Արեւելք կատարած վիկինգների արշաւանքի դրդապատճառը եւ առաջ է քաշել այն վարկածը, որ Ինգվարի արշաւանքով վիկինգները ցանկացել են գտնել Մետաքսի Ճանապարհը: «*Շուէդիայում յատկապէս սուր էին զգում արեւելեան արտադրութեան ապրանքների պակասը եւ դրամի բացակայութիւնը: Ենթադրում եմ, հենց այդտեղ է թաքնուած Հաւդինգ Ինգվարի՝ դէպի Արեւելք... կատարած հեռաւոր եւ դժուարին արշաւանքի իրական պատճառը*», գրում է հեղինակը (էջ 20): Յետագայ գլուխներում, առկայ սակաւաթիւ փաստերի համադրմամբ եւ պատմական ենթահողի քննութեամբ, Մարգարեանը շարունակում է կատարել նորանոր եզրակացութիւններ եւ ճշգրտումներ: Այսպէս, նա փորձում է ապացուցել, որ Ինգվարի արեւելեան արշաւանքը տեղի է ունեցել 1047-1050ին (էջ 48), որ վարեագների յայտնուելը վրաց Բագրատունիների թագաւորութիւնում կապուած է վրաց թագաւոր Բագրատ Դ.ի եւ ապստամբ աւատատէր Լիպարիտ Բագուաշիի միջեւ եղած Սասիրեթեան Ճակատամարտի հետ (էջ 56) եւն.:

Հեղինակն ապացուցում է նաեւ, որ սկանդինաւեան հնագոյն ռունական արձանագրութիւններում յիշուած Ինգվարի ճանապարհորդութեան վերջնակէտը՝ Սերքլանդ երկիրը Վրաստանն էր,

այդ առիթով վկայակոչելով ԺԱ.-ԺԳ. դդ. սկանդինաւեան *Դրախտի Մասին* երկը, ըստ որի Տիգրիս գետը «*հոսում է Սերքլանդից եւ Մեծ Էրմլանդով*» (Ermland hinn mikla՝ Մեծ Հայք, էջ 66): Այլ սկանդինաւեան աշխարհագրական գրութիւններ Սերքլանդը տեղադրել են Սեւ Ծովից հարաւ-արեւելք, հարաւ-արեւմուտք եւ արեւելք, իսկ Տիգրիսի ակունքը համարել են Հայաստանից հիւսիս գտնուող լեռնային երկրում, որը համապատասխանում է Վրաստանին (էջ 67): Այսպիսով, Մարգարեանը համոզիչ ձեւով կրկին, այս անգամ՝ սկանդինաւեան այլ աղբիւրների վկայութիւնների համադրմամբ ցոյց է տալիս, որ Ինգվարն իսկապէս ուղեւորուել է Վրաստան: Աւելին, նա փորձում է նշել վիկինգների շարժման հնարաւոր ուղղութիւնը՝ Շուէդիայից Նովգորոդի եւ Կիեւի ճանապարհով Դնեպրով՝ Սեւ Ծով, ապա Վրաստանի եւ Գեանջայի Էմիրութեան եւ Շիրվանի շիրվանշահերի պետութեան ճանապարհով՝ Կասպից Ծով (էջ 85): Հեղինակը կրկնում է, որ այս անգամ նրանց Ռուսիա է բերել որոշակի նպատակը՝ գտնել «*մետաքսի երկիրը*», եւ կրկին ենթադրում, որ 1046ի ռուս-բիւզանդական հաշտութիւնից յետոյ Կոստանդնուպոլսից ոչ-հեռու գտնուող սլաւոնների եւ վարեագների երեքհազարանոց զօրքը, չնայած պարգեւատրուել է կայսրից, փնտռել է արշաւանքի նոր նպատակակէտ, ուստիեւ վարեագները համոզել են մնացած 2300 սլաւոններին միասին ճամփայ ընկնել՝ Մետաքսի Ճանապարհը որոնելու (էջ 87):

Սագա Ինգվարի Մասին երկում յիշատակուած Ցիտոպոլիսը (բառացի՝ Սպիտակ քաղաք) սագաների ուսումնասիրող Ջոն Շեփըրդը նոյնացրել է վրացական Քութայիսի հետ (որի շէնքերը միջնադարում կառուցած են եղել սպիտակ կրաքարից եւ մարմարից): Նոյն կերպ, Մարգարեանը միեւնոյն սագայում յիշուած Հելիոպոլիսը (Արեւի քաղաք) նոյնացնում է Տփխիս-Թիֆլիսի հետ, որի անուան հիմքը «տաք» բառն է (էջ 181): Սագայում յիշուած երկրի Սիլքիսիֆ թագուհին էլ, ըստ ուսումնասիրողի, վրաց Բագրատ Դ. թագաւորի մայր Մարիամն էր, թէեւ նրա անուան «սիլք» մասը թերեւս առնչւում է մետաքսի հետ՝ որպէս «Մետաքսի երկրի թագուհի»:

Հեղինակը դժուարբացատրելի է համարում սկանդինաւեան սագայի յիշատակութիւնն առ այն, որ իբր Կովկասում վարեագների մեծ մասը, ներառեալ Ինգվարը, մահացել է անյայտ համաճարակից, որ նրանց ճամբարում իբր տարածել են իրենց ծառայող կանայք: Մարգարեանը գրում է, որ Լիպարիտն ինքն էր վարձել վարեագներին, եւ եթէ ցանկանար նրանցից ազատուել, կ'անէր զինուած ուժի, ոչ թէ կին ծառաների միջոցով (էջ 77): Այստեղ կարելի է ենթադրել, որ եթէ սագայի տուեալը պատմական ճշմարտութիւն է, այն կարող է լինել ոչ թէ յատուկ ծրագրուած դաւադրութիւն, այլ, ենթադրենք, սեռային հիւանդութեամբ վարակման դէպք: Մարգարեանը թէեւ այս կապակցութեամբ զուգահեռ է

անցկացնում աւելի վաղ՝ 913-914ի ռուսների կողմից Աղուանքի մայրաքաղաք Պարտաւը գրաւելու մի դրուագի հետ (ըստ Մովսէս Կաղանկատուացու, քաղաքի կանայք փորձել են թունաւորել ռուսներին), սակայն այս հարցում եւս սեփական վարկածն է առաջարկել՝ գտնելով, որ վիկինգ-վարեագների մեծ մասը մահացել է ոչ թէ ինչ-որ անյայտ համաճարակից (նրանցից փրկուել եւ Սկանդինաւիա են վերադարձել մօտ 30 հոգի), այլ 1049 Սեպտեմբերին Հայաստանի Կապուտրու ամրոցի մօտ թուրք-սելջուկների դէմ մղուած ճակատամարտում (էջ 95): Ինչ խօսք, որ Կապուտրուի տարածքում (ներկայիս Էրզրումից արեւելք) պեղումների դէպքում վիկինգեան հետքեր յայտնաբերելու դէպքում Մարգարեանի վարկածն ապացուցուած կարելի է համարել:

Նշենք նաեւ, որ Մարգարեանն է կատարել գրքի երկրորդ մասում բերուած *Սագա Ինգվարի Մասին* գործի թարգմանութիւնն անգլերէնից ռուսերէն, որին մասնակցել են նաեւ դուստրը՝ Լիկա Մարգարեանը, որը հօրն օգնել է անգլերէն եւ շուէդերէն բնագրերի թարգմանութիւնների ընթացքում: Շուէդերէնից եւ իսլանդերէնից թարգմանութիւններում Մարգարեանին օժանդակել է նաեւ հայազգի սկանդինաւագէտ Մարինա Սէյրանովան:

Անշուշտ, Մարգարեանի առաջարկած վարկածները որոշ ուսումնասիրողների կարող է բաւականաչափ համոզիչ չթուալ, սակայն ցայժմ լուրջ առարկութիւններ չեն ինչել[3]: Աւելին, համոզուած ենք, որ սկանդինաւեան այլ աղբիւրների վերհանումը, ինչպէս նաեւ նոր հնագիտական պեղումները Վրաստանում եւ պատմական Հայաստանում կարող են ամրապնդել նրա առաջ քաշած վարկածների ճշմարտացիութիւնը:

Սոյն աշխատութեամբ Մարգարեանը արդէն իսկ մի իւրատեսակ նպաստ է բերել թէ՛ սկանդինաւագիտութեանը, թէ՛ կովկասագիտութեանը՝ միաժամանակ ցոյց տալով հայկական աղբիւրների կարեւորութիւնը՝ հեռու եւ մօտիկ ժողովուրդների պատմութեան այլեւայլ իրողութիւնների պարզաբանման համար:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Ըստ Մարգարեանի՝ շուէդ պատմաբան Մաթս Լարսոնը եկել է նման եզրակացութեան, սակայն՝ փոքր-ինչ այլ ուղիներով: Վերջինս Ինգվարի արշաւանքի իրական լինելն ապացուցելու նպատակով նախաձեռնել եւ 2004ին համախոհների հետ կրկնել է վիկինգների անցած ուղին՝ մակոյկներով Ռիոնի գետից շարժուելով մինչեւ Կասպից Ծով (տե՛ս՝ գրախօսուող գիրքը, էջ 23-24):

[2] Հայկական սկզբնաղբիւրներում վիկինգների (վարեագների) մասին յիշատակութիւններին առաջինն անդրադարձել է Սուրէն Երեմեանը՝ 1946ին հրատարակած իր “Юрий Боголюбский в Армянских и Грузинских Источниках,”

(Եուրի Բոգոլիւբսկին հայկական եւ վրացական աղբիւրներում), Գիտական Աշխատութիւններ Երեւանի Պետական Համալսարանի, Հտր. XXIII, Երեւան, 1946, էջ 390) յօդուածում: Նա նաեւ նշել է, որ հայ քարոզիչը եւ վաճառականը ոչ հազուադէպ մասնակից են եղել վարանգ-վիկինգների՝ այն ժամանակուայ «աշխարհի ծայրը» կատարած ուղեւորութիւններին, եւ որ հայերը սերտ կապերի մէջ են եղել ոչ միայն ռուսների, այլեւ նրանց ցեղակից նորման-վիկինգների հետ. մի փաստ, որ արտացոլուել է 11րդ դարի որոշ սկալդերի երգերում (նոյն, էջ 389-390): Սակայն, որքանով ուսումնասիրել ենք սկալդերի երգերը, դրանցում տեղեկութիւններ չենք գտել հայերի մասին: Նոյն հարցին վերաբերող ուսումնասիրութեամբ հանդէս է եկել նաեւ պատմաբան Կարէն Իւզբաշեանը՝ ԺԱ. դարի պատմիչ Արիստակէս Լաստիվերտցու առնչութեամբ, որի *Պատմութեան* մէջ յիշատակուած է 1054ին սելջուկ Տուղրիլ բէկի դէմ մղուած ճակատամարտում բիւզանդական բանակում մարտնչող «փրանկ»ների գունդը: Լաստիվերտցու երկի ձեռագրերից մէկում «փրանկքի» փոխարէն գրուած է «վրանգք», ուստիեւ Իւզբաշեանը զարգացրել է այն դրոյթը, որ իրականում պատմիչը նկատի է ունեցել վարեագներին, եթէ անգամ այս յատուկ զօրագնդի կորիզը կազմել են ոչ թէ սկանդինաւցիները, այլ ռուսները, սլաւոնները (Կարէն Իւզբաշեան, «Արիստակէս Լաստիվերտցու 'Պատմութեան' Մի Տարընթերցուածքի Մասին. Վրանգք Եւ Ոչ Փրանգք», *Բանբեր Մատենադարանի*, 1958, թ. IV, էջ 77-82, նոյնի՝ "Варяги и прочия в сочинении Аристакеса Ластивертци," Византийский временник (Վարեագները եւ ուրիշները Արիստակէս Լաստիվերտցու երկում), Византийский временник (Բիւզանդական Վիզանտիյսկի ամսագիր), 1958, թ. XVI, էջ 14-28): Վիկինգների եւ հայերի առնչութիւնների մասին տե՛ս՝ նաեւ մեր *Հայաստան-Սկանդինաւիա. Պատմամշակութային Առնչութիւններ* աշխատութեան մէջ (Երեւան, Պատմութեան Ինստիտուտ, 2010, էջ 19-27):

[3] Իր մենագրութեան էջերում Մարգարեանն անդրադարձել է նաեւ *Սագա Ինգվարի Մասին* երկի ռուս հետազօտողներին (Գալինա Գլազիրինա, Ելենա Մելնիկովա, Տատիանա Ջաքսոն, տես գրախօսուող հատորը, էջ 244-247), որոնք առարկում են վիկինգների կովկասեան արշաւանքը՝ չբերելով ոչ մի փաստարկում, անտեսելով վրացական եւ հայկական ժամանակագրութիւնները՝ առանձնորդուելով «*դրանք ինձ յայտնի չեն, ուրեմն գոյութիւն չունեն*» ոչ-գիտական սկզբունքով (նոյն, էջ 245): Աւելին, Մարգարեանը բերել է օրինակներ, երբ Գլազիրինան պարզապէս դիտմամբ խեղաթիւրել է իր գրածը (էջ 246): Ռուս սկանդինաւագէտներին անյայտ է նաեւ, որ Շուէդիայում գտնուել են հայկական ծագումով հնագիտական նիւթեր, ինչը լրացուցիչ ապացոյց է վիկինգների՝ Հայաստանում լինելու (տե՛ս՝ *Հայաստան-Սկանդինաւիա*, էջ 25-26):

ԱՐԾՈՒԻ ԲԱԽՉԻՆԵԱՆ
artsvi1971@mail.ru